

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԴԵՐԻ
ՉԵԶՈՔԱՑՈՒՄԸ ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ*

ՀՏԴ 81.01/08

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խ.Արքվյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի
վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
lingualal51@mail.ru

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համազգային Արևմտյան շրջանի գրական միավորում, բանասիրական
գիտությունների դոկտոր,
Լոս Անջելես, ԱՄՆ
lilitellen@yahoo.com

Հին հայերենում քերականական իմաստների արտահայտման մասնիկավորման եղանակը լեզվի տարժամանակյա դիտվածքում կարող է չեզոքանալ. որոշակի կարգի բառեր, որոնք հին հայերենում բնութագրվում են ձևաբանական տիպաբանության մասնիկավորման հատկանիշով, արդի հայերենում կորցրել են այդ հատկանիշը:

Տարժամանակյա տիպաբանության տեսանկյունից այդպիսի փոփոխությունների են ենթարկվել հին հայերենի որոշակի քերականական մասնիկներ (նախդիրներ, հոլովման և խոնարհման մասնիկներ, թվակազմական ցուցիչներ):

Հին հայերենի որոշ նախդիրներ, լեզվի պատմության ընթացքում ծուլվելով բառածևի կառուցվածքին, զրկվել են իրենց գործառական դերից: Այդպիսի գործընթաց են ապրել հին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի որոշ մասնիկներ՝ հոլովակերտներ և դիմաթվային ցուցիչներ, որի հետևանքով հինհայերենյան բառածևերը վերածվել են ինքնուրույն բառերի՝ ենթարկվելով խոսքիմասային արժեքի տեղաշարժերի: Գոյականի համակարգում քերականական մասնիկների գործառական դերի չեզոքացում են ապրել թվակազմական ցուցիչները, որ դիտարկելի է անեզական գոյականների համակարգում:

Քերականական մասնիկների գործառական դերի չեզոքացումը պայմանավորված է որոշակի գործոններով, որոնցից կարևորվում են քերականական ձևերի վերափոխման տարրերը, բառածևի բառական ու քերականական իմաստի մթազնումը, քերականական մասնիկների իմաստի մթազնումը և այլն:

Քերականական մասնիկների դերի չեզոքացումը կարող է լեզվի տարբեր գոյակի-

* Հոդվածը ներկայացվել է 03.02.2022:

Տպագրության է երաշխավորել ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ Դ. Գյուրջինյանը: 08.02.2022:

Հոդվածը տպագրության է ընդունվել 08.02.2022:

Ճակնների ձևաբանական տիպաբանության որոշման հարցում էական չափորոշիչ դառնալ:

Բանալի բառեր` մասնիկավորում, ձևաբանական տիպաբանություն, նախդիր, հոլովակերտ, խոնարհման ցուցիչ, թվակազմական ցուցիչ, վերախմաստավորում, քերականական իմաստի մթագնում, գործառական դերի չեզոքացում:

Ներածություն

Տարժամանակյա տիպաբանությունն ուսումնասիրում է լեզվի տիպական հատկանիշների փոփոխությունները տարբեր գոյավիճակների միջև, բացահայտում է այդ փոփոխությունների սկզբունքներն ու ուղղությունները և ցույց է տալիս լեզվի քերականական համակարգի նոր տիպական հատկանիշը կամ հատկանիշները, որոնք բնութագրական են լեզվի տվյալ գոյավիճակին՝ իբրև համաժամանակյա իրողություններ:

Ընդհանուր հայերենի նկատմամբ կիրառելով տարժամանակյա տիպաբանության սկզբունքները՝ կարելի է որոշակի գծերով ցույց տալ հին հայերենի քերականական համակարգի տիպային փոփոխությունների դրսևորումներն ու այն վերջնական վիճակը, որ բնութագրական է ժամանակակից հայերենին:

Հին հայերենի պատմական զարգացման ընթացքում նրա քերականական համակարգում արձանագրված քանակական փոփոխությունները հանգեցրել են որոշակի փոփոխությունների, որի հետևանքով փոխվել է լեզվի տիպաբանական բնութագիրը: Հին հայերենի քերականական համակարգը բնութագրվում է կցականությամբ՝ զուգակցված թեքականությամբ, որի դիմաց արդի հայերենը հատկանշվում է հիմնականում թեքականության կորուստով:

Դիտարկենք հին հայերենի ձևաբանական մակարդակի որոշակի միավորների տիպաբանական հատկանիշների փոփոխությունների ընթացքն ու ցույց տանք դրանց դրսևորումներն արդի հայերենում:

Ձևաբանական մակարդակում տարժամանակյա փոփոխություններն ընթացել են տարբեր ուղղություններով. սույն հոդվածում տարժամանակյա տիպաբանության տեսանկյունից դիտարկելու ենք հին հայերենի քերականական մասնիկների դերի չեզոքացման իրողությունը:

Լեզվի ձևաբանական տիպաբանության որոշման հարցում կարևոր գործոն է մասնիկավորումը: Քերականական մասնիկների դերը կարևորվում է նաև լեզվի տարժամանակյա տիպաբանության բնութագրման առումով: Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ եթե լեզվի որոշակի գոյավիճակում քերականական մասնիկները լեզվի տիպաբանական բնութագրի չափորոշիչներ են դիտվում, ապա լեզվի տարժամանակյա կտրվածքում այդ նույն մասնիկները կարող են զրկվել այդ դերից: Այդ գործընթացում կարելի է դիտարկել երկու հանգամանք. մի դեպքում՝ մասնիկները վերախմաստավորվում են. փոխվում է նրանց գործառական դերը՝ բառահարաբերականից անցնելով բառակազմական արժեքի, մյուս դեպքում՝ դրանք կարող են ծուլվել բառի արտահայտության պլանին և այլևս չգիտակցվել քերականական արժեքով:

Այդ իրողությունը որոշակի դրսևորումներով դիտարկվում է ընդհանուր հայերենի զարգացման ընթացքում, երբ համեմատում ենք հին և արդի հայերենների քերականական համակարգերի տիպաբանությունը:

Բովանդակություն

Քերականական մասնիկների տարժամանակյա տիպաբանությունը կարելի է դիտարկել նախդիրների, հոլովման և խոնարհման մասնիկների, ինչպես նաև՝ թվակազմական մասնիկների համակարգերում:

Ա. Հին հայերենի նախդիրները սպասարկու բառեր են, որոնք թեք հոլովների հետ արտահայտում են քերականական զանազան հարաբերություններ: Ժամանակի ընթացքում նախդիրների մի մասը կորցրել է սպասարկու գործառույթը, ծուլվել է բառի արտահայտության պլանին և այլևս չի գիտակցվում նախնական իմաստով ու արժեքով: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ դրանք նախագրային հայերենում գործածվել են ածանցական արժեքով և շատ բառերում այնպես են ծուլվել բառի կառուցվածքին, որ այլևս ածանցական արժեքով չեն գիտակցվում, ինչպես՝ առ-աւել, առ-ողջ, գ-առամ, գ-արդ, գ-արկ, գ-եղծ, ընկեր (ընդ-կեր), ըմբռնել (ընդ-բռնել), ընդ-ունել, յ-անցանք, յ-արգանք, ց-այգ, ց-անկ և այլն¹:

Զխորանալով այս կարգի բառերի կառուցվածքում նախդիրների ածանցական արժեքի հարցում՝ նկատենք, որ ադ միավորները կորցրել են նախդրային (բառակազմական) նշանակությունը, այլ կերպ ասած՝ ապրել են գործառական դերի չեզոքացում:

Հետևաբար, այդ իրողությունը տարժամանակյա գործընթաց է, որ տարածվում է նաև հին հայերենի որոշ նախդիրների վրա, որոնք լեզվի հին շրջանից փոխանցվել են արդի հայերենին:

Այսպես, հին հայերենում ի նախդիրը եզակի տրականի հետ արտահայտում է եզակի ներգոյական հոլովի իմաստ՝ ի անծին – յանծին (անծի մեջ), հոգնակի հայցականի հետ՝ հոգնակի ներգոյականի իմաստ՝ ի անծինս – յանծինս (անծերի մեջ)²: Արդի հայերենում հանծին և հանծինս բառերում ի ձևույթի նախդրային արժեքը չի գիտակցվում³. Բառածների բառական ու քերականական իմաստները մթազնել են, և այդ բառերը գոյականից անցել են կապերի շարքը⁴: Այդպես նաև՝ ի դենս (դեմքերի մեջ) – ի դենս, որ համարժեք է հանծինս ձևին: Հին հայերենում ի նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է գործիական հոլովի իմաստ՝ ի անուն – (յանուն), ի օգուտ (յօգուտ), արդի հայերենում այդ բառերը կապեր են՝ «համար» նշանակությամբ, որոնց կառուցվածքում նախդրային արժեքը չեզոքացել է⁵:

Արդի հայերենի դեպի, բացի կապերը ծագել են հին հայերենի նախդրային կապակցություններից՝ նախդրի խնդրի զեղչման հետևանքով. Ի նախդիրը պատկանել է

¹ Ա.Աբրահամյան, 1976, 228:

² . Լ.Խաչատրյան, Գ.Թոսունյան, 2004, 38:

³ Դեռևս Պ.Պռոշյանի երկում հանդիպում է *հանծին* կապի փոխարեն *անծնավորության մեջ* վերլուծական ձևի հետաքրքրական կիրառություն, որ վկայում է, թե ինչպես են հոլովածները կիրառվել կապի իմաստով: Հմմտ. *անծնավորության մեջ* > *յանծին*. Մկրտչի շնորհիվ և Պատկանյան քահանայի աշխատությամբ օգնության չհասնել հայոց բարձր հոգևորականությունը՝ Ներսեսի *անծնավորության մեջ* (ՊՊ, 2, 629):

⁴ Հին հայերենի որոշ կառուցներում Ի ձևույթն ընդգծված կերպով ունի նախդրային արժեք, հմմտ. Եւ մեք ... հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և յօրինիչ, զի մեզ ի պէտս են և կարգչին իւրեանց ի փառս (Եզն., 14): Ի պէտս են – «կարիքների համար են», ի փառս են – «փառքի համար են»:

⁵ Ալ.Մարգարյան, 1955, 30-32: Ա.Աբրահամյան, 1965, 302-303:

ոչ թե դեպ, բաց նախադրություններին, այլ հայցական և բացառական հոլովներով արտահայտված խնդիրներին: Հմմտ. դեպ ի տուն, դեպ ի լեռան, բաց ի նոցանէ, բաց ի շինականէ:

Հմմտ. Եւ եղեւ երկիրն փարաւոնի, բաց յերկրէ (ի երկրէ) քրմացն (Ծնն., ԽԷ, 22): Դէպ ի մեզ դիմեալ զան (Փարս., 129):

Ժամանակի ընթացքում Ի նախդիրը ձուլվել է նախադրությանը և կորցրել նախդրային արժեքը, և արդի հայերենում ունենք դեպի, բացի (ստուգաբանորեն) բաղադրյալ կապերը, որոնց կառուցվածքում Ի նախդրի գործառական դերը չեզոքացել է:

Հին հայերենում գործածական է զտիւ և զգիշեր մակբայը, որի կառուցվածքում գործառվում է Զ նախդիրը, արդի հայերենում ունենք զօր ու զիշեր կապակցությունը՝ երկրորդ բաղադրիչում Զ նախդրի անկումով, հետևաբար նաև նրա գործառական դերի չեզոքացումով:

Հին հայերենի անցանել բայի առաջին հիմքից համապատասխան նախդիրներով (ի, գ) կազմվել են յանցանք և զանցանք բառերը. արդի հայերենում այդ բառերի կառուցվածքում նախդիրները չեն գիտակցվում. դրանք ունեն իմաստատարբերակիչ հնչույթների գործառույթ. հանցանքը մեղադրելի արարքն է, զանցանքը՝ փոքր հանցանքը: Նախդրային իմաստի կորուստ է նկատելի նաև հանց և զանց հիմքերով բաղադրված մի շարք բառերում՝ հանցավոր, հանցագործ, հանցակից, հանցանշան, հանցախումբ, հանցակազմ, հանցավայր, հանցանշում, հանցապարտ և գերազանց, օրինազանց, զանցառել, զանցառելի, զանցառու, զանցառություն, զանցառում և այլն, ինչպես նաև հետևյալ հարադրություններում՝ զանց անել, զանց առնել, զանց լինել և այլն:

Բ. Հին հայերենի գոյականի հոլովամասնիկները, իբրև բառաձևի ցուցիչներ, բնութագրվում են որոշակի քերականական իմաստներով. այդ կարգի մասնիկների մի զգալի մասը լեզվի պատմության ընթացքում վերաիմաստավորվել է, որի հետևանքով փոխվել են այդ բառաձևերի բառաքերականական նշանակությունները:

Հին հայերենի որոշ անեզական գոյականների (հասարակ և հատուկ անունների) սեռական-տրական հոլովաձևերի ցուցիչները (հոլովիչն ու հոլովակերտ մասնիկը՝ -աց, -ից կամ -ոց) վերաիմաստավորվել են, քանի որ ժամանակի ընթացքում փոխվել են այդ հոլովների քերականական իմաստների դրսևորման միջոցները (ցուցիչները):

Այսպես, Հայոց, Վրաց, Պարսից բառաձևերը հին հայերենում Հայք, Վիրք և Պարսք անեզական գոյականների սեռական հոլովաձևեր են՝ Հայքի, Վրաստանի, Պարսկաստանի¹:

Հմմտ. Քանգի ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն սասանայ պարսկի (Եղ. ,6): Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւթսն եւ զաստեղագէտսն եւ զքաւղեայսն, խօսէր ընդ նոսա եւ ասէր (Բուզ. ,140): Կին ոմն, անուն Նունէ, փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց, ստացեալ շնորհս բժշկութեան, որով և բազում ախտաժետս բժշկեալ, և զզլխովին զկին Միհրանայ առաջնորդին Վրաց (Խոր., 232):

Արդի հայերենում հայոց նշանակում է «հայկական», վրաց՝ «վրացական», պար-

¹ Լ.Խաչատրյան, 1985, 57:

սից՝ «պարսկական»։ Քերականական մասնիկների դերի չեզոքացումը հանգեցրել է խոսքիմասային արժեքի տեղաշարժերի՝ ածականական արժեքի անջատումով։

Նմանապես՝ կամաց և ծեռաց բառածևերը հին հայերենում կամք և ծեռք գոյականների սեռական-տրական հոլովածներ են, ինչպես՝ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիոր ողբովք ճառագրենք զբազում հարուծս, յորում պատահեցաք և մեք իսկ (Եղ., 5)։ Տէ՛ր, զհիմունս երկրի հաստատեցեր, գործք ծեռաց քոց երկինք են (Սաղ., ՃԱ, 26)¹։ Լեզվի պատմության ընթացքում –աց մասնիկի քերականական իմաստը մթազնել է, և արդի հայերենում այն քերականական իմաստով չի գիտակցվում. այդ գործոնով պայմանավորված՝ փոխվել են նաև այդ բառածևերի բառաքերականական իմաստները. կամաց նշանակում է «դանդաղ», ծեռաց՝ «անմիջապես»։ Նախնական գոյականական իմաստին ու արժեքին արդի հայերենում հակադրվում է դրանց մակբայական արժեքը։

Հին հայերենում գոյականի հոգնակի հայցական հոլովն ստանում է -ս հոլովակերտը, ինչպես՝ քաղաքք – (զ)քաղաք-ս, տունք – (զ)տուն-ս, ատամունք – (զ)ատամուն-ս, լերինք – (զ)լերին-ս և այլն։ Արդի հայերենում կան որոշակի բառեր, որոնք առաջացել են հին հայերենի հոգնակի հայցական հոլովածներից՝ -ս հոլովակերտի քերականական իմաստի մթազնումով. այդ բառերը դիտվում են ակախ ելակետային լեզվական միավորներ։ Այսպես, հին հայերենի չորք անեզական թվականի հայցական հոլովածը՝ (զ)-չորս, արդի հայերենում ինքնուրույն բառ է՝ ուղղական հոլով։ Հմմտ. նաև բաղանիք – (զ)բաղանիս, երկու(ք) – (զ)երկուս։ -Ս հոլովակերտի քերականական դերի չեզոքացում կարելի է դիտարկել նաև հատուկ անունների կառուցվածքում, հմմտ. Վարդենիք – (զ)Վարդենիս, Թեղենիք – (զ)Թեղենիս, Կեչառիք – (զ)Կեչառիս և այլն։

Ժամանակի ընթացքում փոխվել են նաև բացառական և գործիական հոլովների քերականական իմաստների արտահայտման միջոցները, իսկ նրանց հինհայերենյան քերականական մասնիկները մթազնել են և զրկվել գործառական դերից։

Դիտարկենք բացառական հոլովի մասնիկների իմաստափոխությունը. սիրտ - ի սրտէ («սրտից»), սկիզբն - ի սկզբանէ («սկզբից»)², բուն - ի բնէ («բնից»), ծին - ի ծնէ («ծննդից»), հարկ - ի հարկէ («կարիքից»)³ և այլն։ Հին հայերենի վերորբերյալ գոյականների բացառականի մասնիկները (հոլովակերտները) մթազնել են, իսկ արդի հայերենին անվանդված այդ հոլովածները (բառածևերը) վերածվել են մակբայների և վերաքերականների։

Իմաստափոխություն գործիական հոլովում. եզակի գործիականի -իւ, -աւ մասնիկները (հոլովիչ – հոլովակերտ) ժամանակի ընթացքում կորցրել են հոլովական նշանակությունը. տեղի է ունեցել բառածևի բառական ու քերականական իմաստի մթազնում, որի հետևանքով արձանագրվել է խոսքիմասային տեղաշարժ։ Հմմտ. իրաւ հին հայերենի իր («առարկա») բառի գործիականն է՝ «առարկայով, փխբ. իրավունքով, արդա-

¹ Պ.Պռոշյանի երկում հանդիպում է ծեռաց բառածևի գործածությունը նախնական՝ տրականի իմաստով, հմմտ. Ինքն է՛ յուր քոլոզը ... ու մեկ էլ ծեռաց մի դագանակ (ՊՊ, 3, 242)։

² Ի սկզբանէ, Տէր զհիմունս երկրի հաստատեցեր (Սաղ., ՃԱ, 26)։

³ Հմմտ. Մինչեւ ի հակէ երթեալ հասանիցենք ի իթանոսականսն զրուցատրութիւնս (Խոր., 12)։

րությանը»¹, արդի հայերենում հաստատական վերաբերական է, հարկաւ - հակ «կարիք, պետք, ստիպմունք» գոյականի գործիականն է «կարիքով, ստիպմունքով»², արդի հայերենում հաստատական վերաբերական է, առթիւ - առիթ գոյականի գործիականն է՝ «առիթով», արդի հայերենում կապ է, շնորհիւ - շնորհ գոյականի գործիականն է՝ «շնորհով»³, արդի հայերենում կապ է և այլն:

Գոյականի եզակի գործիականի որոշ հոլովածներում չի գիտակցվում -ք հոլովակերտ մասնիկը՝ որպես քերականական իմաստի արտահայտման միջոց. մասնիկի գործառական դերի չեզոքացումը հանգեցրել է խոսքիմասային արժեքի տեղաշարժերի, ինչպես՝ մասն - մասամբ, անձն - անձամբ⁴, դիտումն - դիտմամբ⁵ և այլն: Գոյականի թեք հոլովածներից անկախացած միավորներ արդի հայերենում հատկանշվում են մակբայի խոսքիմասային արժեքով:

Հոգնակի գործիականի բաղադրյալ մասնիկը օք (աւք) նույնպես չի գիտակցվում նախնական իմաստով ու արժեքով, որի հետևանքով փոխվել են այդ բառածների խոսքիմասային արժեքները: Այսպես, իրօք հին հայերենի իր («առարկա») գոյականի գործիական հոլովածն է (իրաւք - իրօք)՝ «առարկաներով»: Խելաւք - խելօք - խելոք բառածը նախնական (հոլովական) իմաստով նշանակում է «խելքով»⁶, արդի հայերենում նշանակում է «խոհուն, դատող, իմաստուն», ընտանեաւք - ընտանեօք - բառածնը գործիական հոլովածն է՝ «ընտանիքով», արդի հայերենում այն մակբայ է՝ «տուն ու տեղով, ամբողջ ընտանիքով» նշանակությամբ:

Դիտարկված բառածների քերականական մասնիկները լեզվի պատմության ընթացքում զրկվել են հոլովի քերականական իմաստներ արտահայտելու դերից: Եթե վերոբերյալ գոյականների թեք հոլովածները հին հայերենում քերականական իմաստներն արտահայտում են մասնիկավորման եղանակով և համարվում են բառածներ, ապա արդի հայերենում դրանք կորցրել են մասնիկավորման հատկանիշը և վերածվել են բառերի, որի հետևանքով փոխվել է նաև նրանց ինչպես բառական, այնպես էլ քերականական իմաստը: Ինչպես երևում է դիտարկված օինակներից, արդի հայերենում դրանք ունեն մակբայի, վերաբերականների և կապի խոսքիմասային արժեքներ:

Գ. Քերականական մասնիկների մթազնման իրողությունը դիտարկելի է նաև հին հայերենի բայի խոնարհման համակարգում:

Հին հայերենի ստորադասական եղանակի բայածները, որոնք լեզվի պատմական զարգացման ընթացքում ապրել են բառածի բառական ու քերականական իմաստի մթազնման գործընթաց, արդի հայերենում դուրս են եկել բայական համակարգից՝ անցնելով այլ խոսքի մասերի: Իմաստափոխական այդ իրողության գործոններից է

¹ Հմմտ. Բարույ յիշեցուցանողին հրաման տայ ... յիշեցուցանել զհրաւն և զմարդասիրելն (Խոր., 117):

² Հմմտ. Եւ բաժանեաց ի նոսա զաւանս և զագարակս ... զի պաշտեսցեն զնոսա հարկաւ, բացէ ի բաց (Խոր., 279):

³ Հմմտ. Այսպէս և մեք յաւետախաղաց շնորհիւ ցուլացեալ յիմանալի ճառագայթից հոգևոր հարցն ... յեղեսացուցն հասանէաք քաղաք (Խոր., 344):

⁴ Հին հայերենի որոշակի կապակցություններում հանդես է գալիս մակբայի արժեքով, հմմտ. Ինքնին անձամբ անձին առնէր պատասխանի (Դատ., Է, 29):

⁵ Հմմտ. Աննիրիելի դիտմամբ (ՆՀԲ, 2, 627):

⁶ Հմմտ. Սկանիջի՞ր պարսաւել զմեծութիւն հնարիւք ինչ խելօք (ՆՀԲ, 1, 938):

քերականական մասնիկների մթազնման կամ նրանց գործառական դերի չեզոքացման հանգամանքը:

Ստորադասական եղանակի երկրորդ ապառնիի խոնարհման վերջավորությունները (դիմաթվային մասնիկները՝ -ից, -ցես, -ցէ, -ցուք, -ջիք, -ցեն) բառաձևերի արտահայտության պլանում նախկին իմաստով այլևս չեն գիտակցվում¹:

Հին հայերենի համապատասխան բառաձևերն արդի հայերենում վերածվել են բառերի: Այդ բառերից են՝

Հասցե. հին հայերենում՝ հասանել բայի երկրորդ ապառնիի բայաձև է՝ հասցէ (հասնելու է, հասնի, կհասնի, պիտի հասնի): Հմմտ. Ջրուան հայր մեր խորհեցաւ թէ ո՛ր ոք ի մէնջ վաղ առ նա հասցէ, զնա թագաւորեցուցէ (Եզն, 114): Հասցե-ն արդի հայերենում գոյական է:

Գուցե. հին հայերենի գոգ («ասա՛») պակասավոր բայի երկրորդ ապառնին է՝ գուցէ «ասելու է, ասի, պիտի ասի, կասի» իմաստներով: Հմմտ. Այլ եւ ոչ թէ Հոգի Սուրբ գուցէ՛ լուեալ է մեր (Գործ. ,ԺԺ, 2): Արդի հայերենում այն վերաբերական է:

Դիցուք. հին հայերենի դնել անկանոն բայի երկրորդ ապառնին է՝ «դնելու ենք, դնենք, պիտի դնենք, կդնենք», հին հայերենում հազվադեպ ունի եղանակավորող գործառույթ, ինչպես՝ Դիցուք արդ զայնոսիկ միահամուռն ի յայնմ ժամանակի ապականեալ (ՆՀԲ, 1, 637): Արդի հայերենում այն վերաբերական է:

Կեցցե. հին հայերենի կեալ («ապրել») բայի երկրորդ ապառնին է՝ կեցցէ «ապրելու է, ապրի, պիտի ապրի, կապրի»: Հմմտ. Զի մարմնաւորի չէ հնար՝ թէ ի ջուրս կեցցէ, որպէս և ոչ ջրականին՝ թէ ի ցամաքի կեցցէ (Եզն. ,99): Արդի հայերենում այն ծայնարկություն է:

Քերականական մասնիկների մթազնման իրողությունը կարելի է ցույց տալ նաև ստորադասական եղանակի առաջին ապառնիի բայաձևերի շրջանակներում, ինչպես՝ ինչևիցե, ովևիցե, որևիցե և այլն, որոնց քերականական մասնիկներն այլևս չեն գիտակցվում, իսկ այդ ձևերը դուրս են եկել բայական համակարգից՝ անցնելով վերաբերականների և դերանունների շարքերը:

Դ. Քերականական մասնիկների դերի չեզոքացում են ապրել նաև հին հայերենի անեզական բառերը:

Հին հայերենում որոշակի թվով բառեր –ք հոգնակիակերտ մասնիկի միջոցով արտահայտում են հոգնակի թվի իմաստ: Թվակազմական մասնիկն ավելանում է կախյալ արմատների վրա. հետևաբար այդ արմատները (սերող հիմքերը) բառական անկախություն չունեն և ինքնուրույն հանդես գալ չեն կարող, դրանք չունեն նաև եզակի թիվ: Այդ կազմությունները համարվում են անեզական բառեր, ինչպես՝ աղօթք, անէծք, առանցք, արևմուտք, արևելք, բարք, դժոխք, ելք, խօսք, կամք, կառք, կուրծք, կեանք, կուռք, հանք, հունձք, միտք, մօրուք, մուտք, պահք, պարտք, վարանք, վարք, տիք, տուրք, փառք և այլն²:

Եթե այս բառերը (բառաձևերը) դիտարկենք ձևի և իմաստի հարաբերակցության

¹ Լ. Խաչատրյան, Գ.Թոսունյան, 2004, 171:

² Հին հայերենի անեզական բառերի մասին տե՛ս Ա.Բագրատունի, 1852, 7: Ա.Աբրահամյան, 1976, 20-21:

տեսակետից, կարող ենք ասել, որ դրանք կազմված են սերող հիմքից (կախյալ արմատական մասից) ու քերականական մասնիկից և արտահայտում են հոգնակի թվի քերականական իմաստ: Թվի կարգն այդ բառերում արտահայտվում է մասնիկի միջոցով. հետևաբար թվի քերականական կարգը հին հայերենում տիպաբանորեն բնութագրվում է կցականության հատկանիշով: Նման կարգի բառերում կցական մասնիկն այնքան ամուր է ծուլվել բառերի կառուցվածքային պլանին, որ անտրոհելի է, և այդ բառերը լեզվում գոյություն ունեն հենց այդ մասնիկի (մասնիկների) համակցության հետևանքով:

Թեև այդ կարգի բառերը լեզվում գոյություն ունեն քերականական մասնիկների շնորհիվ, այնուամենայնիվ, դրանց մի մասը բառակազմությանը մասնակցում է առանց այդ մասնիկի՝ պահպանելով արմատական (այս դեպքում՝ կիսանկախ) բառական նշանակությունը: Հմնտ.

արևելք – արևել-ածագ, արևել-եան, արևել-ային, արևել-անշան,

արևմուտք – արևմտ-ական, արևմտ-ային, արևմտ-եայ,

մուտք – մուտ ամսոյ, մայրա-մուտ,

կեանք – կենա-բաշխ, կենա-բարձ, կենա-սէր, կենա-արար, կենա-գրաւ, կենա-հրաշ,

կառք – կառ-ավար (կառ-ավարեմ, կառ-ավարիչ), կառ-արշաւ, կառա-պէտ,

միտք – մտա-դիր, մտա-դիր, մտա-խաբ, մտա-կորոյս, մտա-վարժ, մտա-աւոր¹,

փառք – փառ-աբան, փառ-ակենցաղ, փառ-ակից, փառ-ահեղ, փառ-ամոլ, փառ-ասէր,

անէծք – անիծ-աբեր, անիծ-ական, անիծ-ապարտ, անիծ-իչ, անիծ-անեմ,

կուռք – կռ-ամոլ, կռ-ապաշտ, կռ-ապաշտութիւն, կռ-ապաշտեմ,

պարտք – պարտ-ավճար, պարտ-ատէր, պարտ-աւոր, պարտ-աբաշխ և այլն:

Անեզականություն են արտահայտում նաև բաղադրյալ - անք, իք, -ինք - մասնիկներով կազմված բառերը, ինչպես՝ ապրանք, զբօսանք, լլկանք, տենչանք, տանջանք, տուգանք, փրկանք, կարիք, օծիք, կեղծիք, կարծիք, բաղանիք, տանիք, նախատինք և այլն:

Այս կարգի բառերը հոգնակիության գաղափարի հետ միաժամանակ արտահայտում են հավաքականության իմաստ և, ի տարբերություն –ք մասնիկով կազմությունների, որոշ բացառություններով դրանց արմատները կարող են համարվել կախյալ բայարմատներ (զբօս-ն-ուլ, նախատ-ել, տենչ-ալ, տանջ-ել, փրկ-ել) և այլն: Հետևաբար, եթե այդ արմատները մասնակցում են բառակազմությանը, ապա կարելի է ենթադրել, որ դրանք կա՛մ բայարմատներ են, կա՛մ ինքնուրույն գործածություն ունեցող արմատներ՝ հատկանշային կամ առարկայանիշ բառեր (կեղծ, լլուկ, օծ, տուգ < տոյժ) և այլն):

Հմնտ. զբօսանք – զբօս-ա-սէր, լլկ-անք – լլկ-իչ, լլկ-ոց, լլկ-ումն, լլկ-ութիւն, կարծիք – կարծ-ումն, կարծ-ողական, նախատինք – նախատ-ական, նախատ-իչ, տենչ-անք – տենչ-ասիրել, փրկ-անք – փրկ-ապէս և այլն:

Միանշանակ է, որ դիտարկված բառերը հոգնակիության կամ հավաքականու-

¹ Հմնտ. նաև՝ ի մտի դնեմ, ընդ միտի առնում, զմտաւ ածեմ, ընդ մտաւ ածեմ, ըստ մտի (իւր) կայուն կապակցությունները:

թյան իմաստն արտահայտում են մասնիկավորման եղանակով, սակայն ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, հին հայերենում անգամ այդ բառերի մասնիկները, անկախ արմատին ծուլված լինելու աստիճանից, բառակազմական մակարդակում դառնում են տրոհելի ձևայիններ¹:

Այդ բառերը չունեն եզակի - հոգնակի հակադրություն, սակայն դրանց մի մասը պատկանում է խառը հոլովման այն դեպքում, երբ այդպիսի հոլովում ունենում են այն բառերը, որոնք հատկանշվում են եզակի և հոգնակի թվով: Օրինակ՝ կարծիք, օձիք, կարիք բառերը ենթարկվում են Ռ-Ա հոլովման. դա բացատրվում է այն հանգամանքով, որ եթե այդ բառերն ունենային ենթադրյալ եզակի թիվ, ապա դրանք եզակիում կհոլովվեին Ռ հոլովիչով. կարծւոյ-կարծեաց օձւոյ-օձեաց, կարւոյ-կարեաց և այլն, իսկ միտք, խելք և այլ բառերը պատկանում են Ի-Ա հոլովման, ինչպես՝ մտի-մտաց, խելի-խելաց և այլն:

Այն հանգամանքը, որ անեզական բառերը հանդիպում են եզակի թվով, մյուս կողմից՝ ենթարկվում են խառը հոլովման, հիմք է տալիս կարծելու, որ դրանք նախագրային հայերենում ունեցել են եզակի-հոգնակի հակադրություն: Ժամանակի ընթացքում այդ բառերի իմաստային կառուցվածքում եզակի թվի գաղափարը վերացել է, և դրանք հին հայերենին են անցել միայն հոգնակիի իմաստով և ձևով՝ իբրև անեզական բառեր:

Այդ կարգի բառերի ձևաիմաստային քննությունը ցույց է տալիս, որ դրանց իմաստային կառուցվածքում, թեկուզ թույլ երանգով, ենթադրվում է եզակի թվի գաղափարը, սակայն թվի քերականական կարգը չեն արտահայտում եզակի-հոգնակի հակադրությամբ:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում անեզական բառերի քերականական մասնիկների արտահայտած իմաստը մթազնել է, կամ էլ դրանք վերաարժեքավորվել են իբրև բառակազմական տարրեր, իսկ այդ կարգի բառերն արդի հայերենում համարվում են եզակի թվով միավորներ, որոնք կարող են ստանալ հոգնակի թիվ՝ թվակազմական մասնիկներով՝ եր կամ -ներ: Հմմտ.

ա) -եր մասնիկով հոգնակի ձևեր. միտք- մտքեր, կառք - կառքեր, փառք - փառքեր, կուռք-կուռքեր, կուրծք – կրծքեր, հանք - հանքեր, մեղք – մեղքեր, պարտք – պարտքեր,

բ) -ներ մասնիկով հոգնակի ձևեր. անեծք – անեծքներ, ապրանք – ապրանքներ, հանցանք - հանցանք-ներ, ստինք – ստինքներ, ուսմունք - ուսմունքներ և այլն²:

Կորցնելով անեզականության գաղափարը՝ հին հայերենի հոգնակի բառաձևերն արդի հայերենում բառային ինքնուրույնություն են ձեռք բերել՝ պահպանելով արտահայտության պլանը: Այդ կարգի բառերը բառակազմական քայլերի կարող են մասնակցել՝ առանց կորցնելու քերականական մասնիկը, որ այս դեպքում քերականականից անցնում է բառակազմության ոլորտ. դրանք բառակազմական մակարդակում հանդես են գալիս երկու ձևով.

¹ Թեև անեզական բառերի սերող հիմքերը զուրկ են ինքնուրույն բառագործածությունից, այնուամենայնիվ, մատենագրության մեջ հանդիպում են նման բառերի եզակիաձև վկայություններ, ինչպես՝ Մեք ի մտի եղաք անվրէպ խորհրդով խաղաղ գնալ աշխարհն արեւելից (Եղ., 10):

² Մ.Արեղյան, 1965, 195-196: Հ.Զ. Պետրոսյան, 1972, 66:

ա) զրկվում են հոգնակիակերտ մասնիկից. կառ-ամատույց, խել-ահաս, մտազբաղ, փառ-ապանծ, անիծ-ական և այլն,

բ) հոգնակիակերտ մասնիկը պահպանում են. անխելք-ություն, վարքա-գիծ, խոսք-ակապ, խոսք-աշար, վարք-ականոն, ապրանք - ացուցակ և այլն:

Արդի հայերենում կան նաև վերաարժեքավորված անեզական բառեր, որոնք ընկալվում են իբրև եզակի թվով գոյականներ. այդպիսի բառերն էլ հոգնակի թվի ստանալ չեն կարող՝ պայմանավորված հավաքական բառիմաստով, ինչպես՝ բարք, վարք, խելք, դժոխք, փրկանք, տանջանք, լլկանք, արևելք, արևմուտք և այլն: Այս կարգի բառերը համարվում են անհոգնական գոյականներ:

Հին հայերենի անեզական որոշ բառեր, զրկվելով հոգնակիակերտ մասնիկից, արդի հայերենում հանդես են գալիս արմատական ձևով և չունեն հոգնակի թվի կարգ, ինչպես՝ հունծք- հունծ, նախճիրք – նախճիր, բայց լանջք – լանջ – լանջեր:

Հին հայերենի մասնիկավոր որոշ բառեր, որոնք ունեն իրենց եզակի-հոգնակի հակադրությունը, արդի հայերենում գոյություն ունեն միայն –ք մասնիկով, ինչպես՝ բերք, դիրք, կիրք, ծիրք, տուրք, օրենք: Այս բառերը բնութագրվում են եզակի թվի հատկանիշով. դրանց մի մասը կարող է ունենալ հոգնակի թվի կարգ՝ դիրք - դիրքեր, կիրք-կրքեր, օրենք-օրենքներ և այլն: Այդ բառերի իմաստային կառուցվածքում քերականական մասնիկը հոգնակիության իմաստով չի գիտակցվում:

Երբ ասում ենք, որ լեզվի պատմության ընթացքում անեզական բառերի արտահայտության պլանում –ք հոգնակիակերտն այլևս չի գիտակցվում քերականական դերով, դա նշանակում է, որ այդ կարգի բառերը, բացառությամբ անհոգնական գոյականների, թվի քերականական կարգն արտահայտում են եզակի-հոգնակի հակադրությամբ:

Քերակացություն

Հին հայերենի անեզական գոյականների հոգնակիության իմաստի վերացումը պայմանավորված է քերականական մասնիկների դերի չեզոքացման հանգամանքով, որ արձանագրվել է լեզվի տարժամանակյա կտրվածքում¹: Եթե այդ կարգի բառերի քերականական իմաստը հին հայերենում դրսևորվել է մասնիկավորման միջոցով, ապա արդի հայերենում այդ բառածները, կորցնելով ձևից բխող քերականական իմաստը, ընկալվում են իբրև ելակետային միավորներ, որոնց հոգնակիության իմաստն արտահայտվում է -եր, -ներ մասնիկների միջոցով: Հոգնակիակերտ նոր մասնիկները, կայունանալով բառերի արտահայտության պլանում, անեզական բառերի –ք մասնիկին զրկել են քերականական արժեքից, որի հետևանքով այն ձեռք է բերել բառակազմական ածանցի արժեք:

Հին հայերենում գործող քերականական իմաստների արտահայտման մասնիկավորման եղանակը լեզվի տարժամանակյա դիտվածքում կարող է չեզոքանալ. որոշա-

¹ Ա.Այտընյանը ժամանակակից լեզվում անեզականության վերացումը պայմանավորում է հետևյալ գործոններով. «Նորագոյն լեզու մը՝ միշտ դիւրագունին դիմելու սկզբանը հաւատարիմ մնալով՝ երկու ճամբայ կրնար ունենալ այս դժուարութիւնը հարթելու.- կա՛մ անեզական բառը յոքնակի ձեւին մէջ իբրեւ եզակի գործածել, եւ կա՛մ յոքնակի ձեւը վերցնել եւ ըսել յեզականաբար՝ վան, միտ, աղօթ, և այլն», Ա.Այտընեան, 1886, 82:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2022

կի կարգի բառեր, որոնք հին հայերենում բնութագրվում են ձևաբանական տիպաբանության մասնիկավորման հատկանիշով, արդի հայերենում կորցրել են այդ հատկանիշը՝ պայմանավորված հետևյալ գործոններով. քերականական ձևերի վերաիմաստավորում (վերաարժեքավորում), բառածևի բառական ու քերականական իմաստի մթագնում, քերականական մասնիկների գործառական դերի չեզոքացում և այլն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բուգ. - Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եզն. - Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ. - Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957:

Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913:

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836-37:

ՊՊ – Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1979:

Փարպ.- Դազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1904:

Աստվածաշնչի համառոտագրությունները («Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Մեծ Բրիտանիա, 1997).

Դատ.- Դատաւորք:

Գործ. - Գործք առաքելոց:

Ծնն.- Ծնունդք:

Սաղ.- Գիրք սաղմոսաց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
2. Աբրահամյան Ս, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
3. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
4. Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1886:
5. Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:
6. Խաչատրյան Լ., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985:
7. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ, Գրաբարի դասագիրք, Երևան, 2004:
8. Մարգարյան Ալ, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955:
9. Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:

REFERENCES

1. Abrahamyan A., Grabari d'er'nark, [Course of Old Armenian, Yerevan, Luys, 1976], (in Armenian).
2. Abrahamyan S., Cht'eqvogh xosqi masery' ev nranc bar'akan u qerakanakan hatkanishneri p'oxharaberut'yuny' jhamanakakic hayerenum, [Parts of inflected speech and the relationship between their lexical and grammatical features in Modern Armenian, Yerevan, 1965], (in Armenian).
3. Abeghyan M., Hayoc lezvi tesut'yun, [Theory of the Armenian, Yerevan, 1965], (in Armenian).
4. Ayty'nean A., Qnnakan qerakanut'iwn ashxarhabar kam ardi hayere'n lezui, [Investigative grammar of Modern Armenian, Vienna, 1886], (in Armenian).
5. Bagratuni, A., Hayere'n qerakanut'yun i pe'ts zargaceloc [The Armenian Grammar for the Intelligent, Venice: Mkhit'aryan Miabanut'yun, 1852], (in Armenian).
6. Khachatryan L., Teghasharjher bar'eri d'evabanakan imasti mej, [Transitions in the morphological meanings of words, Yerevan, 1985], (in Armenian).
7. Khachatryan L., Tosunyan, G., Grabari dasagirq [Textbook of Old Armenian, Yerevan, Zangak-97, 2004], (in Armenian).
8. Margaryan Al., Ardi hayereni kapery' [Prepositions of Modern Armenian, Yerevan, 1955], (in Armenian).
9. Petrosyan H., Goyakani t'vi kargy' hayerenum [The category number of noun in Armenian, Yerevan, 1972], (in Armenian).

РЕЗЮМЕ

Нейтрализация функции грамматических частиц древнеармянского языка

/Диахронический аспект/

Лалик Хачатрян

заведующий лабораторией лингвистических исследований Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, д. филол. н., профессор.

Ереван, Республика Армения

Лилит Хачатрян

Литературное объединение общенационального Западного региона, к. филол. н.,

Лос- Анжелес, США

Ключевые слова: аффиксация, морфологическая типология, частицы склонения, частицы спряжения, числообразующие частицы, переосмысление, затемнение грамматических значений, нейтрализация функции.

Аффиксация /агглютинация/ как способ выражения грамматических значений, в диахроническом плане языка может нейтрализоваться. Так, некоторые языковые единицы, которые в древнеармянском языке типологически характеризуются признаками аффиксации, в современном армянском потеряли этот признак. С точки зрения диахронической типологии, изменениям подобного типа подверглись некоторые грамматические частицы. Некоторые предлоги древнеармянского языка в процессе развития языка в структуре словоформы потеряли свою прикладную роль. Подобным изменениям подверглись так же частицы склонения и спряжения, вследствие которого словоформы древнеармянского языка стали

независимыми единицами - подвергаясь частеречному переходу. В системе существительного явление нейтрализации можно наблюдать в рамках числообразующих частиц, которое характерно существительными типа *Pluralia tantum*.

Нейтрализация функции грамматических частиц обусловлена некоторыми факторами, среди которых существенную роль играют переосмысление грамматических форм, затемнение лексико-грамматических значений словоформы или грамматических частиц.

Нейтрализация функции грамматических частиц может стать важным критерием для решения характеристики морфологической типологии разных этапов развития данного языка.

SUMMARY

Neutralization of the Role of old Armenian Grammar Particles

(Diachronic Perspective)

Lalik Khachatryan

*Head of Linguistics Research Laboratory of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Doctor of Sciences in Philology, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

Lilit Khachatryan

*Literary Association of the nationwide Western Region, Ph.D. in Philology
Los Angeles, USA.*

Key words: affixation, morphological typology, prepositions, declension particles, conjugation particles, number-forming indices, reinterpretation, obscuration of grammatical meaning, neutralization of functional role.

The way of affixation of the expression of grammatical meanings in Old Armenian can be neutralized in the diachronic view of the language. Words of some kind, which are characterized in Old Armenian with the feature of morphological typology affixation, have lost that feature in Modern Armenian.

From the point of view of diachronic typology, certain grammatical particles of Old Armenian (prepositions, declension-conjugation particles, number-forming indices) have undergone such changes.

Some prepositions of Old Armenian, having been assimilated to the word structure throughout the history of the language, have lost their functional role. Such a process was experienced by some parts of Old Armenian's declension-conjugation systems, such as declension and person-number indices, as a result of which Old Armenian's words became independent, undergoing changes in part-of-speech value. The functional role of grammatical particles in the nominal system has been neutralized by number-forming indices, which can be observed in the system of nouns *Singularia tantum*.

The neutralization of the functional role of grammatical particles is conditioned by certain factors, from which the reinterpretation of grammatical forms, the obscuration of the literal and grammatical meaning of the word, the obscuration of the meaning of grammatical particles are of importance.

Neutralizing the role of grammatical particles can become an essential criterion in determining the morphological typology of different language states.